

# Շաբաթական ակնարկ 09.12.2024

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

# Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

ԱՄՆ-ի հիմնական ինդեքսները արձանագրեցին հակադիր արդյունքներ, քանի որ RTY-ն և Dow-ն նվազեցին, իսկ NDX-ը և SPX-ը աճեցին



ԱՄՆ բոլոր ժամկետայինության պարտատոմսերի գները բարձրացան




Խոշոր կրիպտոարժույթները, ինչպիսիք են XRP-ը, ETH-ը և BTC-ն, արձանագրեցին նոր ռեկորդային մակարդակներ




MAG 7-ը նույնպես արձանագրեց նոր ռեկորդային մակարդակներ



Նախորդ շաբաթվա ընթացքում **S&P 500**-ն աճեց 0.87%-ով




Նախորդ շաբաթվա ընթացքում **Nasdaq**-ն աճեց 3.28%-ով



# Ինդեքսներ

Նախորդ շաբաթվա ընթացքում **Dow Jones**-ը նվազեց 0.65%-ով




Նախորդ շաբաթվա ընթացքում **Russell 2000**-ը նվազեց 1.69%-ով



Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթ

- Նախորդ շաբաթվա ընթացքում ԱՄՆ-ի հիմնական ինդեքսները հակադիր արդյունքներ արձանագրեցին, քանի որ Nasdaq-ը և S&P 500-ը դրական եկամտաբերություն ունեցան, մինչդեռ Dow-ը և Russell 2000-ն ունեցան բացասական արդյունքներ:
- ԱՄՆ-ում գործազրկության մակարդակը, ինչպես և ակնկալվում էր, կազմեց 4.2%, և մեծացրեց տոկոսադրույքի կրճատման սպասումները: Ավելին, գործազրկության նախնական հայցերը և նոյեմբեր ամսվա ADP-ի (Զբաղվածության ազգային զեկույց) տվյալները սպասվածից ավելի վատն էին, ինչը հանգեցրեց գործազրկության մակարդակի ավելի բարձր կանխատեսումների:
- Վերոնշված հանգամանքները էական ազդեցություն ունեցան Russell 2000-ի վրա, քանի որ այն առավել զգայուն է մակրոտնտեսական տվյալների նկատմամբ, իսկ Nasdaq-ի և S&P 500-ի աճը կապված էր տեխնոլոգիական ոլորտի բարձր կատարողականով:



# Բաժնետոմսերի շուկա | Shorted Equities & Mega Cap

Mega-Caps-ը արձանագրեց ևս մեկ հիանալի շաբաթ՝ հասնելով բոլոր ժամանակների նոր առավելագույն մակարդակի: Որին նպաստեց նրանց եկամուտների վերանայումը:




Նախորդ շաբաթ խոշոր կապիտալիզացիա ունեցող ընկերությունների բաժնետոմսերի աճի շնորհիվ NASDAQ-ը դարձավ ամենաեկամտաբեր ինդեքսը և հուլիսի առաջին շաբաթից ի վեր Russell 2000-ի նկատմամբ արձանագրեց իր ամենամեծ գերակայությունը:



# Բաժնետոմսերի շուկա|3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Salesforce-ը (CRM) բաց թողեց ակնկալվող EPS-ը, բայց գերազանցեց ակնկալվող հասույթը 1.04%-ով: Ընդ որում, ընկերության վաճառքի կանխատեսումը 4-րդ եռամսյակի համար կազմում է 9.9 - 10.1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ավելի բարձր արդյունքների դեպքում ընկերությունը կրկին կգերազանցի սպասելիքները: Ընկերությունը բարձրացրեց իր ապագա սպասումները, արդյունքում ընկերության բաժնետոմսերի աճին 9.70%ով:




Synopsys-ը (SNPS) բաց թողեց ինչպես EPS-ը, այնպես էլ հասույթի ակնկալիքները և կրճատեց իր ֆինանսական ուղեցույցը 2025 թվականի համար: Արդյունքում ընկերության բաժնետոմսերի գինը նվազեց 7.38%-ով:



Royal Bank of Canada-ը (RY) գերազանցեց ակնկալվող EPS-ը 2.04%-ով, իսկ ակնկալվող հասույթը 2.74%-ով, իսկ նկերրության շահույթն աճել է մոտ 15%-ով: Ընկերությունը նաև ավելացրել է զալիք տարվա շահութաբաժինների վճարումը, ինչի հետևանքով ընկերության բաժնետոմսերը վերջին շաբաթվա ընթացքում աճեցին:




Toronto-Dominion-ը (TD) բաց թողեց ակնկալվող EPS-ը, սակայն գերազանցեց ակնկալվող հասույթը գրեթե 20%-ով: Սակայն ընկերության ֆինանսական ցուցանիշները թուլացել են, շահույթը տարեցտարի նվազում է, իսկ փողերի լվացման մեղադրանքների ֆոնին ընկերությունը նվազեցրեց իր միջնաժամկետ աճի թիրախները, ինչի հետևանքով նրա բաժնետոմսերի գինը նվազեց ավելի քան 8%-ով:



# ԱՄՆ պարտատոմսերի շուկան

- ԱՄՆ-ի պարտատոմսերի շուկայում երկրորդ շաբաթն անընդմեջ արձանագրվեց բացասական եկամտաբերություն (գները բարձրացան), որը գլխավորում էին կարճաժամկետ պարտատոմսերը (2 YR):
- Այս կատարողականի հիմնական պատճառը պարտատոմսերի աճող պահանջարկն է թույլ մակրոտնտեսական տվյալների հրապարակման պայմաններում, ինչը նվազեցնում է ապագայում ավելի առողջ և կայուն տնտեսական աճի հույսերը և ներդրողներին մղում է դեպի ավելի ապահով ակտիվներ:



# ԱՄՆ պարտատոմսեր, Դոլարի ինդեքս և տոկոսադրույքի սպասումներ

Թույլ մակրոտնտեսական տվյալները և նոյեմբեր ամսին զբաղվածության վերաբերյալ սպասվածից ավելի վատ հաշվետվություններն էլ ավելի բարձրացրին վերլուծաբանների սպասումները տոկոսադրույքների կրճատման մակարդակի վերաբերյալ:




Նախորդ շաբաթ դոլարը ամրապնդվեց, որը հակասում է տոկոսադրույքների նվազեցման մակարդակի սպասումներին: Պատճառներից մեկը, որը կարելի է վերագրել դոլարի աճին, ԱՄՆ-ի առևտրային դեֆիցիտի սպասվածից ավելի լավ հաշվետվությունն է:



Նախորդ շաբաթ գործազրկության մակարդակը, սպասվածից թույլ նախնական գործազրկության հայտերը և դոլարի ամրապնդումը հանգեցրել են ոսկու բացասական եկամտաբերության:




Անգամ հաշվի առնելով OPEC+-ի արդյունահանման կրճատման վերաբերյալ համաձայնագրի երկարաձգումը, վերլուծաբաններն ակնկալում են նավթի շուկայում ավելցուկային մատակարարումներ, հանգեցրեցին նավթի գների անկման:



- Ընտրություններից հետո կրիպտոարժույթները դեռևս դրական նոտայի վրա են, ավելին, Թրամփը հայտարարեց SEC-ի նոր նախագահի անունը, ով կողմ է կրիպտոշուկաների զարգացմանը, այս հայտարարությունը ազդեց բոլոր կրիպտոարժույթների վրա:
- Bitcoin-ը հասել է բոլոր ժամանակների նոր առավելագույնին՝ կոտրելով 100 հազար դիմադրությունը, XRP-ը 2018 թվականից ի վեր առաջին անգամ հասեց 2.5 դոլարի մակարդակը, իսկ Ethereum-ը մարտից ի վեր առաջին անգամ գերազանցեց 4000 դոլարի մակարդակը:
- Կրիպտոարժույթների կատարողականը հանգեցրեց խսկայական ներհոսքերի ինչպես BTC-ի, այնպես էլ ETH ETF-ներ:



Ըստ KOBEISSI LETTER-ի տվյալների ԱՄՆ-ում ռեստորանների սնանկացումները 2023 թվականին աճել են 133%-ով՝ պայմանավորված ծախսերի աճով, ընդհանուր վաճառքի անկումով և վերջին տասնամյակի ընդացքում գների 44% աճով: Սա COVID-19-ի համաճարակից ի վեր սնանկությունների ամենաարագ տեմպն է:



Ըստ Չարլի Բիելոնի  S&P 500-ը հասել է 6086-ի՝ գերազանցելով Ուոլ Սթրիթի 2024-ի վերջի ամենաբարձր թիրախային մակարդակը ավելի քան 680 կետով և միջին թիրախը՝ 4861-ը՝ 25%-ով:



S&P 500-ը, ներառյալ շահաբաժինները, 2024 թվականին աճել է ավելի քան 29%-ով, ինչը երեք անգամ գերազանցում է միջինը այդ ժամանակահատվածի համար: Սա ամենաուժեղ մեկնարկն է 1997 թվականից ի վեր:
Տվյալները Չարլի Բիելոնի էջից:



- ՕՊԵԿ+-ն արդեն երրորդ անգամ հետաձգել է օրական 180 հազար բարելով նավթի արդյունահանման ավելացման մեկնարկը: Որի շնորհիվ Brent տեսակի նավթը պահպանեց 70-72 դոլարի միջակայքը: Նշենք, որ սեպտեմբերի կեսերին այն նվազել էր 70 դոլարից ցածր պայմանավորված նաև Չինաստանում էներգակիրների ցածր պահանջարկով:
- Morgan Stanley-ն բարձրացրեց նավթի գնի կանխատեսումը ՕՊԵԿ+-ի հայտարարությունից հետո: Բանկը 2025 թվականի երկրորդ կիսամյակում Brent տեսակի նավթի համար կանխատեսում է 69-71 դոլարի սահմաններում (նախկինում $66-68):
- ՕՊԵԿ+-ի նախարարական հաջորդ հանդիպումը կանցկացվի 2025 թվակաի մայիսին:



Այս շաբաթվա ընթացքում 60 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2024 թվականի երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Այս շաբաթ շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են՝ Broadcom (AVGO)-ի, Oracle (ORCL)-ի, Costco (COST)-ի և այլ ընկերությունների հաշվետվությունները:

#1 / 60 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 3

| No. | Ticker | Company | Sector | Industry | Country | Market Cap | P/E | Price | Change | Volume |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | AVGO | Broadcom Inc | Technology | Semiconductors | USA | 883.07B | 156.28 | 179.53 | 5.31% | 27,747,702 |
| 2 | ORCL | Oracle Corp | Technology | Software - Infrastructure | USA | 546.73B | 49.45 | 191.69 | 2.93% | 10,413,463 |
| 3 | COST | Costco Wholesale Corp | Consumer Defensive | Discount Stores | USA | 444.43B | 59.93 | 992.61 | 1.05% | 1,734,990 |
| 4 | ADBE | Adobe Inc | Technology | Software - Infrastructure | USA | 250.08B | 46.70 | 552.96 | 2.74% | 2,949,072 |
| 5 | AZO | Autozone Inc | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 58.04B | 22.11 | 3309.44 | 3.74% | 185,489 |
| 6 | FERG | Ferguson Enterprises Inc | Industrials | Industrial Distribution | USA | 43.90B | 25.45 | 216.93 | 0.81% | 1,367,500 |
| 7 | MDB | MongoDB Inc | Technology | Software - Infrastructure | USA | 26.06B | - | 343.40 | 2.72% | 1,804,306 |
| 8 | CASY | Casey's General Stores, Inc | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 15.76B | 30.73 | 422.27 | 0.52% | 267,487 |
| 9 | TOL | Toll Brothers Inc | Consumer Cyclical | Residential Construction | USA | 15.56B | 10.61 | 154.10 | -0.03% | 1,612,264 |
| 10 | NDSN | Nordson Corp | Industrials | Specialty Industrial Machinery | USA | 14.54B | 30.99 | 254.40 | -0.07% | 224,248 |
| 11 | GME | Gamestop Corporation | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 12.58B | 225.45 | 29.06 | 1.50% | 14,971,170 |
| 12 | CIEN | CIENA Corp | Technology | Communication Equipment | USA | 10.83B | 78.44 | 73.58 | 1.87% | 1,282,013 |
| 13 | HQY | Healthequity Inc | Healthcare | Health Information Services | USA | 8.70B | 83.49 | 100.21 | -0.63% | 885,166 |
| 14 | MTN | Vail Resorts Inc | Consumer Cyclical | Resorts & Casinos | USA | 7.13B | 31.62 | 190.70 | -0.26% | 506,140 |
| 15 | RH | RH | Consumer Cyclical | Specialty Retail | USA | 7.05B | 220.53 | 376.10 | 1.45% | 688,991 |
| 16 | OLLI | Ollies Bargain Outlet Holdings Inc | Consumer Defensive | Discount Stores | USA | 6.31B | 30.85 | 101.54 | 1.25% | 1,316,081 |
| 17 | AI | C3.ai Inc | Technology | Software - Application | USA | 5.56B | - | 40.52 | 8.08% | 13,865,225 |
| 18 | BZ | Kanzhun Ltd ADR | Communication Services | Internet Content & Information | China | 5.08B | 32.13 | 13.92 | 0.22% | 2,324,605 |
| 19 | M | Macy's Inc | Consumer Cyclical | Department Stores | USA | 4.55B | 25.28 | 16.43 | -0.12% | 3,298,442 |
| 20 | BRZE | Braze Inc | Technology | Software - Application | USA | 4.28B | - | 41.46 | 0.41% | 1,753,531 |

Filters: earningsdate:nextweek export

## Այս շաբաթվա ԱՄՆ-ի հիմնական տնտեսական զեկույցները

| | | | | |
|---|---|---|---|---|
| **MONDAY, DEC. 9** | | | | |
| 10:00 am | Wholesale inventories | Oct. | 0.2% | -0.2% |
| **TUESDAY, DEC. 10** | | | | |
| 6:00 am | NFIB optimism index | Nov. | 94.3 | 93.7 |
| 8:30 am | U.S. productivity (revision) | Q3 | 2.2% | 2.2% |
| **WEDNESDAY, DEC. 11** | | | | |
| 8:30 am | Consumer price index | Nov. | 0.3% | 0.2% |
| 8:30 am | CPI year over year | | 2.7% | 2.6% |
| 8:30 am | Core CPI | Nov. | 0.3% | 0.3% |
| 8:30 am | Core CPI year over year | | 3.2% | 3.3% |
| 2:00 pm | Monthly U.S. federal budget | | -$353B | -$314B |
| **THURSDAY, DEC. 12** | | | | |
| 8:30 am | Initial jobless claims | Dec. 7 | 224,000 | 224,000 |
| 8:30 am | Producer price index | Nov. | 0.2% | 0.2% |
| 8:30 am | Core PPI | Nov. | -- | 0.3% |
| 8:30 am | PPI year over year | | -- | 2.4% |
| 8:30 am | Core PPI year over year | | -- | 3.5% |
| **FRIDAY, DEC. 13** | | | | |
| 8:30 am | Import price index | Nov. | -0.2% | 0.3% |
| 8:30 am | Import price index minus fuel | Nov. | -- | 0.2% |




060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am